ՆՈՐ-ԴԱՐ

№ 217 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 23 Դեկտեմբերի 1888 Ուրբաթ 23 Դեկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 217

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպեկ։
Բաժանորդագրություն ընդունվում է Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրությունների հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարությունների բառին 2 կ., բեկվածների համար կրկնապատիկ։

ԿԸՂՄԸՒՐԿՈՆ-ՓՐԿՈՆԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

ԹԻՓԼԻՍՈՒՄ

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն չէքով և ծրագրով

Խմբագրութիւնը կ'ուտանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում հետևյալ «Նոր-Դար»-ի խմբագրատները։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ
„КАВКАЗЪ“

Въ 1889 году газета «Кавказъ» будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:
СЪ ПЕРЕСЫЛКОЮ:

Съ доставкою въ Тифлисѣ.	по Имперіи.	По почтовому союзу
На годъ . . 11 р. 50 к.	На годъ . . 13 р. — к.	На годъ . . 18 р. 40 к.
„ ½ года . 6 „ — „	„ ½ года 7 „ — „	„ ½ года 10 „ — „
„ 3 мѣсяца. 3 „ 50 „	„ 3 мѣсяца 4 „ — „	„ 3 мѣсяца 6 „ — „
„ 1 мѣсяцъ. 1 „ 50 „	„ 1 мѣсяцъ 1 „ 75 „	„ 1 мѣсяцъ 2 „ — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.
Для иногородныхъ адресовать: Тифлисъ, въ редакцію газеты «Кавказъ».
(Ю.) 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մի նկատողութիւն։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Բարգաւ. Երևան։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Յայտարարութիւնները։

Թիֆլիս, 22 դեկտեմբերի 1888.

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Բացի ճեմարանից, մենք ունենք մի ուրիշ հոգևոր դպրանոց, որ մեր դպրոցների մէջ թէ հնագոյնն է և թէ առաջինն է համարուած. առաջին ոչ թէ նրա համար, որ նա արդի իւր դրութեամբ և իւր տուած արդիւնքով առաջինն է, այլ նրա համար, որ Թիֆլիսումն է, նախնականապէս ամենից աւելի ապահովուածն է, և դրանից աւելի լաւ և բարձր դպրանոց, սեմինարիա չունինք մենք այսօր։ Ընթերցողը հասկանում է, որ մեր խօսքը վերաբերում է Ներսիսեան հոգևոր դպրանոցին։

Եթէ մեզ համար թանկ է ազգ. կրթութեան գործը, հապա և անտարբերութեամբ չպիտի վերաբերունք դէպի այդ դպրանոցի դրութիւնը։

Ներսիսեան դպրանոցի տեսուչը արձակուած է իւր պաշտօնից։ Արձակուած տեսուչը Ներսիսեան դպրանոցի տեսչութեան պաշտօնը ստանձնելուց առաջ անյայտ անձն չէր, նա գաւառական քաղաքների հայոց դպրոցներում վարել էր ուսուցչի և տեսչի պաշտօնները, լաւ թէ վատ այդ պէտք է յայտնի լինէր Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան, նրանք պարտական էին նրան՝ տեսչին հրաւիրելուց առաջ, նրա պաշտօնավարութեան, նրա ընդունակութեան մասին բաւարար տեղեկութիւններ հաւաքելու։ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուները ճանաչում էին արդեօք այժմս արձակուած տեսչին, նրան հրաւիրելուց առաջ հաւաքել էին նրա մասին հարկաւոր տեղեկութիւնները թէ ոչ, այդ մենք չգիտենք։

Մեզ յայտնի է միայն, որ նրան գրեթէ միաձայն տեսուչ հրաւիրեցին և երբ այդ տեսուչը արդէն ստանձել էր իւր պաշտօնը, սկսեցին նրա դէմ տրտնջալ։

Ինչու՞ համար այսօր այդ տեսչի դէմ տրտունջներ են յայտնւում, ինչպէս է վարել նա իւր պաշտօնը, այդ մասին ոչինչ մի դրական, պաշտօնական բան յայտնի չէ. երբ հրապարակի վրայ չէ դրած Ներսիսեան դպրանոցի տեսչի պաշտօնավարութեան մասին մի որևէ պաշտօնական կամ բանաւոր տեղեկագիր, մամուլը կարող չէ որոշ կարծիք յայտնել, պաշտպանել կամ դատապարտել տեսչի պաշտօնավարութիւնը։

Մեզ համար դպրանոցի խընդրում տեսչի անձնաւորութիւնը կարող չէ առաջին տեղը բռնել։ Ով էլ որ լինի տեսուչ, բարձր ուսումն ստացած, վարչական տաղանդ, կարող և համառ անձն, այնու ամենայնիւ Ներսիսեան դպրանոցում տեսչի խնդիրը, ինչպէս և ուրիշ շատ խնդիրներ, միշտ անորոշ կը մնայ և միշտ զանազան վէճերի պատճառ կը դառնայ, վէճեր, որոնք դպրանոցի բարգաւաճման վրայ շատ վնասակար ներգործութիւն են ունենում։

Հարկաւոր է մեր դպրոցներում իշխող «ներքնը» փոխել, հարկաւոր է հոգաբարձութեան կազմակերպութիւնը փոխել. անձերը փոխելով միայն գործը առաջ չի գնալ։ Արդէն անցեալ ամառը մենք այդ խնդիրը յարուցել էինք և երևի առիթ պիտի լինի դարձեալ խօսելու մեր դպրոցներում տիրող կարգերի և նրանց տեղը նոր կարգեր մտցնելու մասին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ստացանք հետևեալ հեռագիրը.

ՋԱԼԱԼ-ՕՂԼԻ, 22 դեկտ. ժամ 1-ին 25 վ.

Ջալալ-Օղլու հայոց եկեղեցում, Լօռու կենդրոնում, այսօր կատարուեցաւ իրենց հայրենակից Հանգուցեալ գրաֆ Միքայէլ Տարիէլեան Լօռու-Մելիքեանի հանդիսաւոր հոգեհանգիստը։

Լօռեցիներ։

—

ԴԱՒԱՐԻՑ.—Տիզլիս հասարակական—Մամաջանեան բանկի փակման պատճառով, լսում ենք, որ երէկ փոխանակներին և հոգաբարձուներին տրուած են օրինաւոր հաշուի հաւատարմագիրը չհետևալ բանկում գտնուած եկեղեցական գումարները պահանջելուց։ Ի դէպ, եթէ բանական չլինի պահանջից կանխիկ գրամով ձեռք բերելու լաւ կը լինէր, եթէ անշարժ արժեքներ կալուածներ ձեռք բերուէր եկեղեցիների համար՝ քան թէ 5% բնեթներ, որոնք արդի անհրաժեշտ բաղմապատիկ պահանջներին չեն կարող բաւական բաւականութիւն տալ, հետևապէս մեր կրթական և վարչական գործերը կարող են կաղալ. այն ինչ հիմնաւոր անշարժ կալուածները հսկող և աշխատաւոր ձեռքերում մեծ արդիւնք կարող են բերել։

—

Յունուարի 6-ին, դեկտեմբերի 22-ին, Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան նիստում հոգաբարձուները, համաձայն ստացած կոնդակի, արձակում են դպրանոցի տեսչին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ.—Թիֆլիսից դէպի Երեւան տանող ճանապարհը շարունակ մէկ ամիս է, որ փակուած էր. յարաբերութիւն, հաղորդակցութիւն համարեա կտրուած էր. ամբողջ 16 օր պօստ չէր ստացուում. բայց վերջին օրերս ճանապարհները բաւական լաւացան և հաղորդակցութիւնը հեշտացաւ։ Ճանապարհների վատութեան պատճառով Երևանում ապրանքը սաստիկ թանկացաւ. օրինակ շաքարը, որ ծախւում էր առաջ ֆունտը 17—18 կոպ., երկու օրուայ մէջ բարձրացաւ մինչև 23—24 կոպ., նաւթը, առաջ 4 կոպ. էր, այժմ 7 կոպ., լուցկին 10 հատ 6 կոպ. էր, այժմ 15—20 կոպ. և այլն.

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 22-ին, դատական պալատի երկրորդ դեպարտամենտում կրկին քննուեց եղբ. Զանջուղազեանների անանկութեան գործը, որ ահա ութ տարուց աւելի է, որ քննւում է։ Իսկ այդ միջոցին նրանք, որոնք պատճառել էին այն սարսափը, որ իւր ժամանակին ընկել էր մեր երկրի առևտրականների վրայ Զանջուղազեանների անանկանալովը, նստած բանտում և բոլորովին քանդուեցան, իսկ դատական աստիճանները (ինստանցիա) զբաղուած են տեղեկութիւններ հաւաքելով այդ անանկութեան օրսիսութեան մասին։

Դատարանի սոյն նիստում խնդիրը նոյնպէս չվերջացաւ, ինչպէս յայտնի է, կօնկուրսային վարչութիւնը Զանջուղազեանների անանկութիւնից անդգուշութիւնից առաջացած հաշիւ. այդպիսի որոշման դէմ բողոքեցին կօնկուրսի երեք անդամները և մի քանի պարտատէրեր, որոնք ապացուցանում էին, որ Զանջուղազեանները պէտք նենգաւոր անանկ ձանաչուին։ Թիֆլիսի նահանգական դատարանը քննելով այդ գործը, հակառակ պարտատէրերից մեծ մասի կարծքին, Զանջուղազեանների անանկութիւնը ճանաչեց անգգոյշ։ Գործը նորից քննուեց դատական պալատում, վերաստուգեցին հաշիւները և դատական միւս գործառնութիւնները, և երէկուայ նիստում պալատը նախ պէս քննեց երդուեալ հաւատարմատար Եւանգուլեանի՝ Զանջուղազեանների իրաւունքների ներկայացուցչի յարուցած խնդիրը, որով նա առաջարկում է քննել մի շարք վկաների, որոնք կարող են հաստատել, որ Զանջուղազեանների անանկութիւնը հետևանք է առևտրական այն անպատեհ ճգնաժամին, որին վերջին արևելեան պատերազմի պատճառով ենթարկուեց կովկասի առևտուրը, թէ՝ Զանջուղազեանները իրենց անանկ յայտնելու միջոցին, նրանց մագազիններում և պահեստներում այնքան ապրանք կար, որ կարող էր նրանց պարտքը բուռլուն մի բուռլիով ծածկել և թէ՝ նրանց բոլոր ապրանքը լիստ չէին գնահատուէին ստացաւ։ Այսպէս օրինակ, արտասահմանեան մի քանի հարիւր բուռլանները գոյքը 30 ական հազարի գնահատեցին, իսկ նրանց նկուղներում գոյքը 1 ր. 15 կ., շղակներն և ուրիշ թանկագին իրերը ոչ թէ առանձին-առանձին գնահատեցին, հապա միասին. նոյն կերպով էլ վաճառքն էր կատարուում. իսկ առևտրական գրքերի թարգմանութիւնն այնքան հարևանցօրէն է կատարուած, որ 10,000 ր. փոխանակ գալու է եկել 1000 ր. և այլն։ Մի շարք վկաներով և տեղական բանկերի վկայագրերով պ. Յանգուլեանցը ապացուցանում էր, որ Զանջուղազեաններն իրենց սնանկ յայտարարելուց մի ամիս առաջ, Թիֆլիսում իրենց պարտատէրերին 50,000 ր. աւելի նաղտ վճարեցին։

Պալատի դատախազը օգնական պ. Սմիրնովը կարծիք յայտնեց, որ կարելի է կատարել հաւատարմատար խնդիրը յիշուած վկաներին հարց ու փորձ անելու մասին, որի հետ դատական պալատը համաձայնեց և, «Тиф. Лист.»-ի ասելով, որոշեց,—եղ. Զանջուղազեանների անանկութեան յատկութեան մասին գործի էական քննութիւնը սկսելուց առաջ, հարց ու փորձ անել հաւատարմատար Եւանգուլեանի ցոյց տուած վկաներին։

—

ՇՈՒՇՈՒՒՑ. — Ներկայումս սաստիկ թանկութիւն է Շուշիում. հարուստ կալուածատէրերը երկիւղ են կրում ցորենի չեմարանները բանալու, իսկ քաղաքի հարուստները 3-ից մինչև 4 տարուան պաշար ունին պատրաստի, մինչ արհեստաւոր մարդիկ չեն կարողանում թանկութեան պատճառով մի բան գնել, մանաւանդ աղքատ դասակարգը։

Մի ամիս առաջ ալիւրի պուդը բարձրացել էր 2 ր. 20 կոպէկ։

Սոյն տարուայ բերքը լրագիրներից բոլորիքեանին յայտնի պէտք է լինի. բոլորը յոյսը մնաց անկատար. այսպիսի դէպքերում չահւում են միմիայն մի քանի վաշխառու վաճառականները, որովհետև գիւղացին ստիպուած դիմում է նրան և փող է խնդրում մի քանի ամիս ժամանակով. վաճառականը իւր շահերը չկորցնելու համար տալիս է մի քանի տասնեակ բուռլի և նշանակում է Յունուարին 30 կ. ամսական, (36%)։

Գիւղացին խոստացած ժամանակին չէ կարողանում վճարել պարտքը, ժամանակ է խնդրում, որ պարտքի տեղ վճարէ բոժոժով կամ ցորենով. խեղճ գիւղացին իւր մի տարուայ վաստակած աշխատանքը վճարում է, բայց դեռ էլի չէ կարողանում լրացնել իւր պարտքը, որովհետև ահագին տոկոս պէտք է վճարէ։

Այժմս առաջին տեսակ հացի ֆունտն է 5 կ., 2-րդ տեսակինը՝ 4 կ., իւղի պուդն 12 րուբլի, գարու պուդը՝ 1 րուբլի, ոչխարի մսի ֆունտը 7 կ., տաւարինը՝ 5 կ., մի բեռ փայտը, որ արժէ 25 կ., վաճառւում է 45 կ., մի խօսքով սարսափելի թանկութիւն է. խնդրում ենք ոստիկանութեան ուշադրութիւնը։

—

Առաջիկայ երկուշաբթի, դեկտեմբերի 26-ին, քաղաքիս Ժողովարանում լինելու է պարահանդէս Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին։ Պարահանդէսի կարգադրիչը՝ ընկերութեան խորհրդի անդամ պ. Ալէքսանդրը Մանթաշեանն է։ Ցուսալի է, որ պարահանդէսը բազմամարդ լինի, որովհետև բարեգործական է և այդ ընկերութիւնը գլխաւորապէս օգնում է չքաւոր աշակերտներին և ուսանողներին։

—

ՂԶԼԱՐԻՑ. — Վերակից Առաքելոյ Գեր. Սուրբհանոյի արձան հովուութեամբ շարժւում է պաշտօնական շրջաններում Թեմական դպրոց բանալու հարցը Ատրպատականի վիճակում, որ բաւականին ծանր հարց է։ Ըստ ինքս, եթէ հասարակական միայօժար զոհողութեամբ ևս աջողուելու լինի այդ՝ ամենայարմար և նախապատուելի տեղը Ղզլարն է, որի հետ ողջ Թեմն ևս համաձայն պիտի լինի։ Երկու տարի առաջ գեր. Սուքիաս եպիսկոպոսի յորդորմամբ ևս շարժուեց այդ հարցը, բայց կիսատ մընաց. այն ժամանակ տեղիս եկեղեցիների և դպրոցների նիւթական հանգամանքները առաւել աջող էին, ի սրտէ ցանկանում ենք Նորին Սրբազնութեան բարի նպատակը պսակուած տեսնել։

—

Տեղական ռուս Թերթերին պետերբուրգից հեռագրում են, ըստ երևոյթին, բաւական հաստատ աղբիւրներից, որ մօտ օրերս վերջնականապէս վճռուած է Անգլիովկասեան երկաթուղին կառավարութեան ձեռքն անցկացնելու խնդիրը։

—

ԱԼՏՂ-ԱՂԱՋՈՒՄ խիստ ձմեռը քս. կոսւեց դեկտեմբերի 1-ից։ Ջորս օր շարունակ ձիեն տեղաց և բոլոր Ճանապարհները բռնեց։ Ճանապարհին բուքից բռնուած կառապանները, կառքերն ու ձիերը Թողած, աշխատում էին մի կերպ գիւղ հասնել։ Հիւսիսային ցուրտ քամին փչում էր և ցուրտը 12°-ի հասնում։ Այժմ ցերեկը հալում է սառոյցը, իսկ գիշերը սառչում։ Ալտը-աղաջցիներից մինը, որ բուքի մէջտեղ օրսի էր գնացել, յանկարծ լսում է ձիու խրխնջոց, գընում է ձայն լսուած կողմը և ակնատես է լինում մահուան դէմ կռուին։ Երկու ուղևոր, բուքից բռնուելով, ձիերը կապում են ծառին, իսկ իրենք նստում են նրանց կողքին։ Նրանցից մէկը բոլորովին սառած էր արդէն, իսկ միւսը դեռ կեանքի նշանները էր ցոյց տալիս։ Այս սարսափելի գիւտն անող ոյսորդն այդ մասին իմաց է տալիս գիւղում, որտեղից անմիջապէս օգնութեան են գալիս։ Սառչողին տարան գիւղ, բայց ոչ մի միջոց չօգնեց նրան—կիս ժամից նա մեռաւ։ Միւսին, որ կեանքի նշոյլ չէր ցոյց տալիս, Թողին իւր տեղը։ Ցետոյ իմացուեց, որ ցրտի այդ զոհերը, «Кав.»-ի ասելով, լինում են Զարգանլը գիւղի բնակիչ—մէկը Մօլլա-Թաղի և միւսը նրա ազգականը, որոնք վերադառնալիս են լինում մօտակայ գիւղից, ուր գնացած են լինում ցորեն և գարի գնելու։

—

Թիֆլիսում կայանալիք գիւղատնտեսական ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովին պատուաւոր անդամ, ինչպէս յայտնի է, նշանակուած էր և Անդրկասպեան երկրների կառավարիչ Ա. Վ. Կօմարովը, որ ընդունել է անդամութիւնը. այսպիսով ուրեմն մենք առաջիկայում միջոց կունենանք մօտից ծանրամասնաբար ծանօթանալու և Անդրկասպեան երկրների արդիւնաբերութիւնների և արդիւնագործութիւնների հետ։ Բացի երկրիս կառավարչապետի նշանակած անձերից, պատուոյ անդամ նշանակուած են և բարձր Նիկոլային և Մոսկվայի հարմալսարանի պրօֆէսսոր Բօդդանովը։ Դեկտեմբերի 20-ին կարգադրիչ յանձնաժողովի կազմած նիստում քննուեց և ընդունուեց ցուցահանդէսի ծրագիրը և քննուել են վարչական, տնտեսական և շինարար յանձնաժողովների անդամներ, նոյնպէս, տեղական ռուս Թերթերի ասելով, յանձնաժողովների կարգադրիչներ՝ ա) երկրագործական արդիւնաբերութեան յանձնաժողովի համար պ. Խատիսեանցը, բ) կալնային տնտեսութեան յանձնաժողովի համար պ. Քալանթարեանը. գ) ձկնային արդիւնաբերութեանը—պ. Դօլուխանեանը. դ) անտառաբուծութեանը—պ. Մեդվեդև. ե) չերամապահութեանը և մեղուաբուծութեանը—Ն. Ն. Շաւրովը. զ) պատիժպանութեանը—Վ. Ն. Գէևակին. է) գիներգործութեանը—Ի. Զօրջաձէն. ը) անային արդիւնաբերութեանը—պ. Ադէլխանեանը և Թ) գործարանա-գործատնային բաժնի համար—Ա. Ի. Թախտէև։

—

ՂԶԼԱՐԻՑ.—Դեկտեմբերի 8-ին տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցում հանդիսաւոր կերպով և վայելուչ ատենաբանութեամբ կատարուեցաւ Վեհ. Կաթողիկոսի տօնի առիթով եկեղեցական հանդէս. պատարագիչն էր տեղական յաջորդը. ներկայ էին և երկսեռ դպրոցների աշակերտուհիները և աշակերտները։ Ի դիմաց Հոգևորականութեան և Հասարակութեան տուեցան շնորհաւորական հեռագիրներ, որոնց և Նորին Օծութիւնը շնորհակալ է արել հեռագրով բաշխել իւր հայրապետական սրտեռանդ օրհնութիւնը։

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ ներկայումս կազմակերպւում է քննող յանձնաժողովներ, որոնք, հմայալսարանական նոր կանոնադրութեան զօրութեամբ, պիտի է քննութեան ենթարկեն համալսարան ատարտողներին։ Այս նոր հիմունքներով առաջին քննութիւնները, «Рус. Кур.»-ի ասելով, կ'սկսուին առաջիկայ տարուայ սեպտեմբերին։

—

ՁԻԱՐ ԳԻՒՂԻՑ.—Իմերէթում էլ ձմեռը այս տարի խիստ է. մեր գիւղում և շրջակայքում ցուրտը և քամին անտանելի են։ Անդադար ձիւն է գալիս, մէթերքները սաստիկ Թանկացել են։

—

Սրեքշաբթի, դեկտեմբերի 20-ին, կէս գիշերին հրդեհ պատահեցաւ Ա. Ղէլեանեանի և ընկ. կաշու գործարանում։ Այրուել են գործարանի հինգ բաժանումները մէջն 200,000 րուբլու հնում ապրանքներով։ Գործարանը ապահովագրած է 20,000 րուբլով «Սալամանդրա» ընկերութեան մօտ։

—

ՂԶԼԱՐԻՑ.—Դեկտ. 9-ին Թերէքի ցաւղվկա ձիւը պատառուել է և սպառնում է քաղաքին և նրա արևմտեան կողմում գտնուած Ղարասուի այգիներին և ագարակներին. պատճառը գետի սառչելուն է, որի ընթացքը առաջից խափանուելով սառոյի կոյտերից, քանդել է ամբարտակը և ջուրը կատարի կերպով Թափւում է ցած. օրը 1 ը. 50 կոպ. մշակ է վարձւում հեղեղը փակելու. եկեղեցեաց գանգակները խփում են սաստկութեամբ օգնութեան հրաւիրում. ջուրը պատում է քաղաքիս արուարձանը և վազում է քաղաքի մէջ. ամսիս 11-ին երեկոյեան կազմուեցաւ արտակարգ քաղաքային ժողով նախագահութեամբ գաւառապետի. հանգանակութիւնը հասել է 2,200 րուբլու. հեղեղի առաջն առնելու. այս րոպէին ողջ քաղաքը ահ և դողի մէջ է. տայ Նախախնամութիւնը միջադանական հոգի մեր հասարակութեան *)։

—

Ստացանք «Աբրահամ Լինկօլն» առնուով գիրքը. հեղ. վ. Հօֆմանի. Թարգմանեց Միքրպա Տէր-Սարգսեան. տպուած է տոյն 1888 Թուին Շուշիում, Միրզաջան Մահտեսի Յակոբեանցի տպարանում մաքուր և գեղեցիկ Թղթի վրայ, մաքուր տպով։ Գինն էլ Թանկ չէ, 30 կոպէկ է։

Աբրահամ Լինկօլնը՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների այդ քաջալրի նախագահը իւր անձի օրինակով ցոյց տուեց աշխարհին, Թէ հաստատուն կամքը ընչ կարող է շինել։ Աբրահամ Լինկօլնի կեանքն այնքան խրատական է և կրթիչ ոչ միայն մանուկների, այլ և հասակաւորների համար, որ շատ նշանաւոր գրողներ իրենց գործի նիւթ են շինել նրան։ Նոյն իսկ մենք ունենք «Շարլ. Մունթ»-ի գրուածքի մի Թարգմանութիւնը։ Հօֆմանը, մանկական այդ հռչակաւոր գրողը, նոյնպէս իւր գողտրիկ գործիչը նուիրել է Լինկօլնին, որի հայերէն Թարգմանութիւնն է «Աբրահամ Լինկօլն»-ը։

Գիրքի Թարգմանութեան լեզուն կանոնաւոր է, սահուն և դիւրընթերնելի։ Գիրքը տպուած է մաքուր և գեղեցիկ։ Ցոյս ունինք, որ իւրաքանչիւր օգուտաբերութեամբ կը կարդայ այդ գիրքը, որի գինը Թանկ չէ, 30 կոպէկ։

—

ԵՐԻԱՆԻՑ.—Երևանում մի պարոն, Դաւիթ Խուդաբաշեան, մի նոր աղբ հանք է գտել Երևանում, Աշտարակ տանող Ճանապարհի մօտ, «Ծիծեռնակաբերդ» կոչուած բլրակի մօտակայքում։ Ցիշեալ պարոնը սրանից մի ամիս առաջ քաղաքից Թոյլտուութիւն խնդրելով, մշակներ է տանում և քանդել է տալիս. յիշեալ տեղը շաբաթական 20 օր մշակները քանդելուց յետոյ, վերջապէս յայտնուում է սպիտակ աղը. յայտնի չէ, Թէ ինչ տեսակին է պատկանում այդ նոր աղը։ Դա մի անսպառելի աղբիւր կարող է դառնալ քաղաքի համար։

—

Ջիւնը և Ճանապարհների հաղորդակցութեան խանգարումները մեծ օգուտ են բերում մթերքներով առատուր անողներին։ Շուկայում ամեն բան Թանկացել է և գները օր օրի վրայ բարձրանում է։ Շաքարի ֆունտը, օրինակ, ծախւում են արդէն 22 կոպէկով. երևի էլի կը Թանկացնեն։ Ռոճիկով ապրողների դրութիւնը նախանձելի չէ, մանաւանդ որ տօները գալիս են։

—

ՈՒԶՈՒՆ ԱԴԱՑԻՑ հեռագրում են «Кав»-ին, որ այնտեղ նաւահանգիստն այնքան սառել է, որ կովկասի և Անդրկասպեան երկրների մէջ նաւային յարաբերութիւնները կարուած են։

—

Մալաքաղաքի Թերէքի ասելով, գիւղատնտեսական վարչութեան առաջարկութեամբ, պետերբուրգի ջրջանի հոգաբարձու գեներալ Նովիկովի նախագահութեամբ և գիւղական, լուսաւորութեան, ներքին գործերի մինիստրութիւնների մասնակցութեամբ կազմուած է մի առանձին յանձնաժողով՝ բոլոր ուսումնարանական հաստատութիւնների մէջ գիւղատնտեսական մարմնամարզութեան և գիւղատնտեսական ծառայութեան սկզբունքները մտցնելու և խնդիրը քննելու համար։

—

ՇՈՒՇՈՒԻՑ.—«Առաւտուր չկայ», ահա մի սովորական տրտունջ, որ լսուում է իւրաքանչիւր վաճառականի բերանից։ Եւ իրաւ, նայում ես՝ ամբողջ օրը նրանք կանգնած դուքանների առաջ, կամ մուշտարուն են սպասում, կամ այս ու այն պատի տակ շարուած արևի առաջ, ամբողջ օրը կորցնում են բամբասանքներով և այլ գատարկաբանութիւններով, առանց մտաբերելու, Թէ այդ պարապ կորցրած օրերից քաղկանում են տարիները, և այդ տարիներն անցնում են անդառնալի կերպով երանց կեանքից, իսկ երբեմն-երբեմն ձանձրացած նայում են արեգակին և ժամացոյցին, սպասելով, Թէ երբ կը լինի, որ ազատուին կամաւոր բանտարկութիւնից և տուն գնան։

Դժբաղդաբար մեր վաճառականները դեռ ևս այնքան զուրկ են մրցասէր պարզացումից, որ օգտուել պարապալ ժամանակից ամենևին չեն իմանում. վաճառական լինել, նրանց կարծիքով, նշանակում է ամեն կողմնակի զբաղմունքից և հոգեկան բաւականութիւններից հրաժարուել։

Մի կողմից էլ գերդաստանական շռայլ ծախսերն մեծ հոգս են պատճառում նրանց. շռայլութիւնն օրէցօր առաջ է գնում անբարոյական շտեմարաններում. Թղթախաղը մի արհեստ, մի տպրուստի մէջից է դարձել շատերի ձեռքին։ Վաճառականութիւնը շուչեցնու համար գաբձել է մօդային պէս մի բան։ Ով որ 10 րուբլի ունի, իսկոյն մի դուքան է բաց անում, կանգնում է դախլի առաջ, բերանը բաց ու խուփ անում յորանջում ու Ճարահատեալ դախլի վրայ քնում և, խեղճը, երազումն անգամ մուշտաթի չէ տեսնում։

—

ՂԶԼԱՐԻՑ.—Այս տարի, յանկարծակի ցրտերի պատճառով, Ղզլարի այգիների մեծ մասը առանց Թաղելու մնացին մի առ ժամանակ և Թէպէտ հղանակները մի քիչ մեղմանալուց յետոյ, ձիւնախառն հոդով Թաղեցին, բայց հմուտ այգեպանները ասում են, որ այգիները առանց վնասի չեն պրծնիլ այդ ցրտից։

—Ղզլարում անտանելի ցեխեր էին, եղանակը վերստին ցրտից. բաւականին Թանկութիւն է քաղաքում, տրկարութիւնը և մահն էլ շատացել է. ամառուանից ջերմով հիւանդները ձմեռը Թոքերի բորբոքումով են մեռնում, իսկ այդ վերջիններից դեղօրայքով պրծնողները ամառը ջերմով են մեռնում. միով բանիւ չեն աւելանում։

—

Ջորեքշաբթի, դեկտեմբերի 21-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում, դատական և բժշկական վարչութեան անդամների մէջտեղով քննուում էր մի մարդի մասին ընդունակութիւնները։ Այդ մարդի ոչ անունն է յայտնի, ոչ կոչումը, ոչ ինչ ազգի եղածը, ոչինչ յայտնի չէ։ Նրան բռնել են Դուշէթի գաւառում և չնայելով բոլոր ջանքերին, չեն կարողացել մի բան իմանալ. Նրան հարցեր են տուել արևելեան զանազան լեզուներով, բայց ոչինչ հետևանքի չեն հասել. հարցեր են տուել Կովկասեան լեռնային զանազան ազգերի լեզուներով, բայց էլի ոչինչ չեն իմացել։ Նա պատասխանում է մի անծանօթ, Թէև արևելեան լեզուով. Որպէս զի դժուարութեան առաջն առնուի, դատարանը, տեղական Թերէթերի ասելով, կարգադրել է Ա) լեռնային վարչութեան խնդրել, որ ուղարկեն, գործի երկրորդ անգամ քննելու միջոցին, լեռնական բոլոր լեզուների Թարգմաններին Թիֆլիս և Բ) կարգադրել Դուշէթի գաւառապետին, որ հարց ու փորձ անէ և տեղեկութիւն հաւաքէ գիւղացիներից, Թէ արդեօք յիշեալ անձն նշաններով մարդ կրած չէ։

—

Աքսորականների որդիկրանց համար Թիֆլիսում հիմնուած պատսպարանի օգտին, ինչպէս լսել է «Кав.»-ը, առաջիկայ տօնական օրերից մինում, պ. Մելիք-Ադամեանը պիտի մի դասախօսութիւն կարդայ բանտարկութեան մասին։

—

Հայուհիաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ հաղորդել, որ նոյեմբերի 27-ին Թիֆլիսի Ժողովարանում կայացած պարահանդէսից յօգուտ ընկերութեան մուտք եղաւ 1041 ր., իսկ ծախսը—181 ր. զուտ արդիւնք մնացել է յօգուտ ընկերութեան 860 րուբլի։

—

ՂԶԼԱՐԻՑ.—Այս տարի Ղզլարի այգիներից ստացուած է սովորական մասուխլի (բեռք) 1/3 մասը. սպիտակ ծախւում է 9—11 կոպ., շերան 80—90 կ., գինին 1 ր. 50 կ.—2 ր. վեդրոն։ Այգիների դէսեատիններին տուած 1200 % առանց սկզբնի սպիտակ ծախելու արտօնութեամբ բաւականին օգտուողներ եղան. բայց եղան և ոչինչ օգուտ չքաղողներ, որոնք Ճարահատեալ դէսեատինին 60 րուբլի արժողութեամբ մաքսատնից չնորհուած Թուղթը տարան այս ձմեռուայ ցրտերին 30 րուբլով ծախեցին. սրանք չքաւոր այգեպէրեն էին, որոնց համար նոյն իսկ տրուած է այդ արտօնութիւնը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԴԱ (Ջևանշիրի գաւառ), 10 դեկտեմբերի.—Պարդաւը հին ժամանակը եղել է Աղուանից Թագաւորանիստ քաղաք, այժմ աւերակ է, և այդ աւերակների մէջ բնակւում են Թուրքեր, որոնք իրենց բնակութեան տեղին անուանում են Բարդա։ Պարդաւի փառաւոր անցեալից ոչինչ համարեա չէ մնացել. միայն տեղ-տեղ երևում են քաղաքը շրջապատող պարիսպների մնացորդները և աւերակների բեկորները։ Պարդաւում աչքի են ընկնում պատմական հսկայ ծառերը՝ չինարիները, բարդիները և հաստաբուն կաղնիները։ Որքան զարմանում է մարդ՝ երբ տեսնում է այդ հսկայ ծառերը, որոնց բարձրութիւնը հասնում է երկնքին։

Պարդաւը, ինչպէս ասում են, պատկանում է Թուրք բէկերին։ Պարդաւի օդը վատ է, ամառը շատ շոգ է լինում, այդ պատճառով էլ ամառը բոլորը տեղափոխւում են Մռաւ լերան ստորոտը, Խոտավանքի հիւսիսային կողմը։ *)

Անցեալ տարի, Պարդաւի Թուրք

*) Մի Թուրք բէկ՝ Գումուշ-բէկ անունով, պատմում էր, որ սաթ գնալու ժամանակ, Թուրքերը Դալի վանքի առաջով են գնում, բայց նախ այնտեղ մատաղ են անում և յետոյ շարունակում Ճանապարհը։ Դրա պատճառը, Թուրք բէկն ասելով, հետևեալն է եղել.—նրանք օրանից մի 20 տարի առաջ, կամեցել են վանքի գմբէթի արծաթեայ խաչը գողանալ, բայց շտապում են, զևռում, այսահարում, և էլ չեն գողանում, այլ ներողութիւն խնդրելով վանքից, մատաղ են անում և ազատւում։ Վանքը՝ Սբ Յովհաննէսի վանքն է։

բէկիները տեսնում են, որ առևտուրը շատ ծաղկում է այդտեղ և Եւրախ կայարանից մինչև Շուշի նոր Ճանապարհ են շինում Գարդաւի միջով, սկսում են աղիւսից խանութներ պատրաստել, մի քանիք և երկու քարավանսարայ կառուցանել, որպէս զի Եւրախից եկողները այդտեղ իջևանեն։ Գարդաւը շատ օգուտներ է տալիս շուշեցի արհեստաւորներին, որոնցից շատերն իրենց ապրուստն այդտեղ են Ճարում։ Գարդաւում օրինակ, այսօր 5 խանութում շուշեցի արծաթագործներ են քանում, 6 խանութում դերձակներ են քանում, կայ նոյնպէս 4 դարբին, երկու սուսերագործ, մէկ ներկարար, բոլորն էլ շուշեցի են։ Սակայն բաւական թուով շուշեցի դերձակներ, արծաթագործներ և վաճառականներ կան նաև Ջիւանշիրի գաւառի բոլոր Թուրք գիւղերում. պարզագիներն և Ջիւանշիրի գաւառի Թուրքերը շատ հիւրասէր են։ Նրանք պատկանում են երկու ազանդի՝ Սիւննի և Շեհ, բայց պէտք է ասել, որ սերով են միմիանց հետ։ Գարդաւում ամեն ուրբաթ օր «բազար» է լինում (տօնավաճառ), ուր շատ լաւ առուծախս է լինում։ Թուրքերը «բազար» օրը բերում են իւղ, պանիր, բուրդ և զանազան գործուածքներ, որոնք այդտեղ շատ ածան են լինում, ինչպէս նաև ամեն բան՝ ինչ որ Թուրքերը բերում են ծախելու։ Գարդաւում կայ մի ուխտատեղի, որ Թուրքերը կոչում են «չարվիչա քիամգադայ» (տալիքի չարվիչի մարգարէի որդի)։ Այդ ուխտատեղին մի եկեղեցի է և այդ եկեղեցու գլխին մինարէներ են պատրաստել, որպէս զի հայերը չկարծեն, թէ դա հայի եկեղեցի է։

Այդ եկեղեցու մէջ կայ երեք խոցան, սեղանի բեմի վրայ գրած է մի գիրք՝ որ աւետարան է, մի քառանկիւնի հարթած քար, վրան խաչ, հաւանական է, որ դա չարժական սեղան եղած լինի. կան նաև մի քանի խաչեր պատերի վրայ նկարած, թէև Թուրքերն աշխատել են չնչել, որպէս զի չենք իրենց սեպհականութիւնը համարուի։ Եկեղեցու մէջ, սեղանի առաջ, կայ մի սիւն։

Այդ բոլորը ծածկուած է սև գորգով։ Ասում են, որ նշանի առաքեալի մի մասունքը այդտեղ է գտնուում։ Այդ մասին թուրեենացու մէջ լեզուած է. «Ի նմին ժամանակի և նշանի աշակերտ Թադէոսի առաքելոյն, որ ձեռնադրեալ էր եպիսկոպոս ի Ծակորայ հոգւոյն Տեառն, եկն ի Հայս, և անդի յԱղուանս, և ծուխ գաւառ ի քաղաքն Սահառ երեք աշուրեցոյց. և գնաց ի գիւղն Գիտ և դարձոյց զամենեսին. և եկեալ ի դաշտն Աղուանն՝ անդ կատարեցաւ քարկոծմամբ և ընկեցաւ ի գօբ մի անյայտ, և յետ ժամանակաց ի յայտ եկեալ՝ տարան գնա ի գիւղն Ուսեկան, և ապա վանքըն Ջուշտիկ։ Եւ յետոյ վաչական արքայ Աղուանից կանգնեաց սիւն ի վերայ գրին, յորոյ վերայ սեպհականաբեր նորին, վաչականայ Ճգնեալ՝ հանգեաւ ի Քրիստոս»։ Այդ եկեղեցուց դուրս մի չնչուած արձանագրութիւն կայ, որից ոչինչ չէ կարդացուում, բացի 182 (՞)։ Մէկ էլ, «ես կամի (տաս)», ուրիշ ոչինչ։ Եկեղեցու հիւսիսային կողմը կայ մի ուրիշ չքնաղ գրուածք, այսպէս՝ «ՒՈՂ. Թ. ս. Հոկան»։

Այդ եկեղեցու մօտ է գտնուում մի մզկիթ՝ բարձր մինարէներով, որի մէջ է Թագուած, 83 Թուին մեռած Բաքման Մխրայ շահը, որը այնքան է Գարդաւը սիրում եղել, որ մեռնելուց առաջ կարգադրել է իրեն Գարդաւում Թաղել։

Տեղացիները ասում են, որ Բաքման Մխրան, Ղարաբաղ արշաւելու ժամանակն է հաւանել Գարդաւին։ Տեղիս արծաթագործների մօտ կան արծաթէ հին գրամներ, որոնք, նրանց ասելով, Ճանապարհի վրայ բանողներն են գտել. փողերի վրայ նաչ կամ մարդի գլուխ կայ նկարած, իսկ արձանագրութիւնն աղուանական լեզուով է գրած։

Գարդաւի արևելեան կողմը, Թառ-Թառ գետի միւս ափին, գտնւում է Արփաւուդ Թրքարնակ գիւղը, ուր կայ մի ծխական-ռուսաց ուսումնարան։ Արփաւուդում նոյնպէս ծաղկած է առևտուրը։ Ամառները այդ գիւղի մի մասն է միայն տեղափոխւում աւելի հով տեղ, բայց լինում է ժամանակ, որ չեն էլ տեղափոխւում։

Գարդաւի հիւսիս-արևմտեան կողմում գտնւում է Հասանիրզի հայաբնակ գիւղը, մօտաւորապէս 60 տուն բնակչով։ Հասանիրզի հայերը շատ նախանձախնդիր են դէպի կրօնը և ազգութիւնը,—խիստ պաս պահող են, նախնական սովորութիւնները դեռ մնում են նրանց մէջ. նրանք չջնաշատուած են Ջիւանշիրի գաւառի Թուրքերով. չունեն քահանայ և ուսումնարան։ Թէև շատ են փափագում ուսումնարան ունենալ, բայց հոգ տանող չկայ։ Եթէ այդ գիւղում պատահում է մի օրինակատարութեան կարիք, դիմում են և Մարագայ գիւղից քահանայ հնչեցնում։ Գատահում է, որ ամիսներով անմկրտիչ մնում են երեխաները, շաբթուայ ննջեցեալները,—ամեն մի դէպքի համար աղերսում են Մարագի քահանաներին։ Հասանիրզցիները պարապում են խաշնարածութեամբ և երկրագործութեամբ. ինչպէս ասացինք, գրանք չջնաշատուած լինելով Թուրքերով, խիստ մեծ կարիք է զգացւում մի լաւ քահանայի։ Հրաւիրում ենք ոամ անկն է ուշադրութիւնն այս գիւղի բնակիչների դրութեան վրայ։

***

ԵՐԵՒԱՆ, 15 դեկտեմբերի.—Երևանը, իբր առևտրական գրութեամբ և կազմակերպութեամբ շատ ետ է մնացել ուրիշ շատ քաղաքներից։ Երևանի վաճառականութիւնը գանւում է դեռ իբր մանկական քայլերում։ Երևանը հարաստ է հում բերքերով. նա ագատ կարող է առաջին տեղը բռնել իբր մթերքներով Կովկասի քաղաքների մէջ։ Եթէ Երևանի ներկայ բնակիչների տեղ մի ուրիշ եւրոպական ազգ լինէը, նա անշուշտ ներկայումս իբր առևտրական զարգացման վերին աստիճանին հասած կը լինէը, այնինչ, Երևանը դեռ չէ ճանաչել նոյն իսկ իբր գերքը։

Թէև Երևանում խոշոր գրամատէրեր Թուով քիչ են, և եղածները էլ, մի չաբ բախտով, Թշնամի միմիանց, այնու ամենայնիւ երևանցիները եթէ ցանկանային, կարող էին ընկերութիւններ հաստատել և միացած ոյժերով մեծ գործ կատարել։

Կարծես երևանցին քնած է և անտարբեր դէպի իւր երկրի արդիւնաբերութիւնը, մինչդեռ օտարները, այդ դէպքում աւելի սրատես գտնուելով, կարողանում են օգտուել՝ ընտրելով Երևանն իբրև արդիւնքի աղբիւր։

Եթէ օտարերկրացի վաճառականը կարողանում է օգտուել Երևանից իւր անկմտութեամբ հանդերձ, շատ սարդ է, որ երևանցին կրկնապատկը կարող է օգուտ ստանալ, որովհետև երևանցին նոյն մթերքը կարող է աւելի աժան ձեռք բերել քան թէ օտարը։

Բայց ցաւը նրանումն է, որ Երևանում բացակայ է քնկերական համերաշխութեան ոգին, որ վայել է և անհրաժեշտ վաճառականին։

Երևանցի վաճառականը միւս վաճառականին կատարեալ Թշնամի է և հակառակ, որովհետև վաճառականութիւնը իսկապէս այդ է պահանջում նրա կարծիքով։

Երևանցի վաճառականը իւր քիչ դրամով սկսում է վաճառականութեամբ պարապել և մեշտ անաչդութեան է հանդիպում, որովհետև վաճառականութեան անյագ ոգին պահանջում է, որ մեշտ մեծ մեծ գործեր կատարուին. հետևանքը լինում է վաճառականի անկումը նեւթապէս, նեւթական անկման հետեւում է և բարոյական անկումը։ Բայց որքան լաւ և օգտակար կը լինէը, եթէ նրան աներ գրամատէրերը ընկերութեամբ մեանային և միացած ոյժերով մեր երկրի հում բերքերը, որ մեծ քանակութեամբ է արտադրւում, արտահանէին օտար երկիրները. դրանով թէ օգտուած կը լինէին և թէ օգտած կը լինէին երկրի տնտեսական շահերին։

Բանտարկը է և ապահով այն երկիրը, ուր և՛ առևտրականութիւնը գանւում է ծաղկած դրութեան մէջ. իսկ երևանի վերաբերմամբ չափազանցութիւն է ասել, թէ առևտրականութեան զարգացում կայ։ Մի երկրի տնտեսական ապահովութիւնը կախուած է և առևտրականութեան զարգանալուց։

Բացի «տաքի վրայ» *) առևտուր անողներից, Երևանում խանութպանները ևս գանւում են աննախանձելի դրութեան մէջ. ամեն րոպէ երևանցի խանութպաններից դժգոհութիւն է լսւում առևտրի վերաբերմամբ, որ մի տեսակ անշարժութեան մէջ է գտնւում։ Երևանցիներն իրենց վաճառելի ապրանքները գնում են գլխաւորապէս Թիֆլիսից՝ որի համար իրենց ներկայացուցիչներն ունին։

Բացի Թիֆլիսից, երևանցիների մի մասն էլ Ռուսիայի զանազան քաղաքներից է ապրանք առնում. այդ տեսակ ապրանքների մէջ առաջին տեղը բռնում է մանուֆակտուրային ապրանքը, որի մեծ մասը ստացւում է ուղղակի Մոսկուայից և մասամբ էլ ուրիշ քաղաքներից. պէտք է խոստովանուել, որ Երևան մեծ քանակութեամբ ապրանք է ներմուծւում։

Եթէ մեր երևանցի առևտրականները միանային և մեր երկրի բերքերն ընկերութեամբ արտահանէին, և գրա փոխարէն ուրիշ ապրանք բերէին, այդ միջոցը բաւական գործ կը տար առևտրի զարգանալուն։

Ցանկալի էր, որ մեր յարգելի հայ վաճառականները իրենց ուշադրութիւնը դարձնէին յիշածս երևոյթի վրայ, որից սպասելիք օգուտը ակնհայտ է։

Ս. Օհանջ.

---

*) Առքի վրայ առևտուր անող վաճառականը նա է, ով որ խանութում չէ նստում, այլ զանեանի տակ կանգնած պատահական առևտուր է անում, երբ աղուում է նրան իւր ցանկացած ապրանքը ձեռք բերել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՂՂԱԴՂԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՕԼՂԱՐԻԱ.—Բօլղարիայի ներկայ կառավարութեան Թշնամի չջնաննեը ոչինչ միջոց չեն խնայում Բօլղարիայի դրութիւնն բոլորովին աննախանձելի գոյներով նկարագրելու և աշխարհին ցոյց տալու համար։ Սակայն, դա սովորական բան է դարձել արդէն և դրանց վրայ մի առանձին ուշադրութիւն չպիտի դարձնել, որովհետև նոյն իսկ այդ թերթերն էին, որ գուշակում էին, թէ բօլղարական ներկայ կառավարութիւնը կարող չէ երկար գոյութիւն ունենալ, քանի ժողովուրդը դէմ է նրան, մինչդեռ Բօլղարիան առաջ է գնում և Ստամբուլովը կառավարում է երկիրը։

—Ստամբուլովի կուսակից մամուլը շատ Թշնամաբար է վերաբերւում դէպի Սօլշովը և Նաչեւիչը և նրանց անուանում են պետական դաւաճան։

ԲԵԼԳԻԱ.—Բելգիայում բանուորների սկսած շարժումը խաղաղեց և մտքերն արդէն բաւական հանգստացել էին. բայց այժմ Բելգիայում ընդհանուր ուշադրութեան և խօսակցութեան առարկան է դարձել Բելգիայի եպիսկոպոսների յայտագիրը, որով բոլոր Ճշմարիտ հաւատացեալ կաթոլիկներին դէմում են հովուական շրջաբերականներով, որոնց մէջ նրանց խորհուրդ են տալիս ամեն կերպ աշակցութիւն ցոյց տալ պետական գահի աշխարհական իրաւունքը վերականգնելու գործին։

ՍԵՐԲԻԱ.—Լուր է տարածուած, իբր Միլան Թագաւորը սահմանադրութիւնն ընդունելուց յետոյ, պիտի ուղևորի արտասահման պետական նշանաւոր անձերի հետ տեսակցելու նպատակով։

ԱԻՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ. — վիեննայից հեռագրում են մայրաքաղաքի Թերթերին դեկտեմբերի 14-ին. «Այսօր կայացաւ ներկայ կայսրի աղջկայ՝ էրցհերցոգուհի Մարի-Վալէրեանի նշանադրութեան հանդէսը էրցհերցոգ Ֆրանց Սալվատօրի հետ։

ԹԻՒՐՔԻԱ.—«Հիւսիսային հեռագրական գործակալութիւն»-ը կ. Պօլսից հեռագրում է, որ Ա.կոփ-փաշան վերջնականապէս հաստատուած է Փինանսների մինիստր և այդ մասին սուլթանի երդիչն հրատարակուած է։

—«Նով.»-ին հեռագրում են վիեննայից, որ լուր է տարածուած, Թէ կրետէ կղզու վրայ ապստամբութիւն է բարձացել։

ՖՐԱՆՍԻԱ. — Ինչպէս յայտնի է, պատգամաւորների ժողովի որոշումով բոլոր Ֆրանսիական գահի Թեկնածուները արտաքսուեցան Ֆրանսիայից։ Վերջին ժամանակներս խնդիրը է բարձրացել Ֆրանսիա գաւառ Թոյլուսիութիւն տալ մի քանի հոգու այդ արտաքսուածներից։ Այսպէս օրինակ, Օմալեան Հերցոգի մասին «République Française»-ի մէջ Բէյնախն գրում է. «Օմալեան Հերցոգը արժանի է, որ նրան Թոյլ տրուի Ֆրանսիա վերադառնալու, վերադառնալու դէպի իւր հայրենիքը՝ նախ քան իւր աչքերը չաւիտենական քնով փակելը, Թոյլ տրուի վերադառնալ այդ հին պինուորին, որ Ալֆերկայում ահագին ծառայութիւններ մատոյց Ֆրանսիային, այդ մարդուն, որ հպարտութեամբ կրում է իւր պատուոյ, որ հակառակորդ է Ռուլանժէին, Թոյլ տուէք նրան, պ. նախագահ, Ֆրանսիական հողի վրայ ոգջունելու յեղափոխութեան հարիւրամեակը։ Թող Ֆրանսիա վերադառնայ Ալէ-էլ-կադէրի յաղթողը, կաւենակի բարեկամը, «Նամակներ Ֆրանսիայի մասին»-ի հեղինակը և Բազէնի քարեկամը։ Այդ արժանի կը լինի հասարակապետութեան»։

ԻՏԱԼԻԱ. — Պատգամաւորների ժողովում մինիստր-նախագահ Կրիսպին փայլուն յաղթանակ տարաւ։ Երկրատև և վառ վիճաբանութիւնից յետոյ, մերժուեցան մինիստրութեան հասամբ մի քանի Թշնամական առաջարկներ և ընդունուեց մինիստրութեան համար բոլորովին նպաստաւոր առաջարկ և այն՝ Ձայների ըստուար մեծամասնութեամբ։ Այս յաղթութիւնը արդէն ցոյց է տալիս, Թէ որքան հիմնաւոր էին այն լուրերը, Թէ պատգամաւորների ժողովը բոլորովին Թշնամաբար է վերաբերւում գէպի Կրիսպին. ընդհակառակն, դրանով իտալիան ժողովուրդը ցոյց տուեց, որ լիովին համաձայն է Գերմանիայի և Աւստրիայի հետ դաշնակցութիւնն հաստատելուն և դրա համար Ձայների ստուար մեծամասնութեամբ ընդունեց կառավարութեան կազմած եւ ու մուտքի հաշիւը առաջիկայ տարուայ պետական և այլ վարչութիւնների համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Գարնի գիտութեան Ակադեմիան գեկտեմբերի 20-ին սիրելի Կովալևսկուն, որ Սոսկովսկի համալսարանում պրոֆէսսոր է, մրցանակ է տուել, Նրա գրուածքն արժանացել է 500 ֆր. մրցանակի։

*** Գերմանական հռչակաւոր վիպասան Եպերհագենը գրել է մի նոր վիպասանութիւն «Ein neuer Pharao» —«Նոր-Փարաւոն» վերնագրով։

*** Փոքրիկ ժամացոյցներն այժմ մոդա են Գարիզում. փոքրիկ ժամացոյցներով զարդարում են ապրանքները, մատանիները, գօտի կոճակները, հովանոցի կոթերը, Թղթապանակները և այլն. Գարիզի մոդային առիւծներից մինն այնտեղ հասաւ, որ մինչև իսկ իւր ոտնամանները զարդարեց փոքրիկ ժամացոյցներով։

*** Առաջիկայ 1889 Թուի յունվարի մէջ պիտի կատարուի Փրանսիական «Journal des Débats»-ի գոյութեան հարիւրամեակի տօնախմբութիւնը։ Այդ առթիւ լրագրի խմբագրութիւնը մտադիր է հրատարակել մի փառաւոր գիրք, որի մէջ գրուած կը լինի լրագրի պատմութիւնը և նրա գլխաւոր աշխատակիցների կենսագրութիւնները։ Օմալեան Հերցոգն այդ առթիւ արդէն գրել է Կլեյվիլէ-Ֆլէօրիի մասին յօդուած և շատ լաւ գրուած է։

***

ԿՆՈՋ ՎԸՀԺԱՆԴՈՒԹԻՒՆԸ.—Մօտերքս Լիւգէն կղզու Բուրգէն գիւղում commis voyageur պէտք է պրօպակուէր մի մանկատի ուսուցչուհու հետ։ Հասնում է պակի օրը. հարսը գնում է եկեղեցի սպասելով փեսի գալուն։ Անցնում է մի ժամ, փեսան չկայ։ Ցանկարծ նրանից ստանում են մի հեռագիր, որով նա յայտնում է, որ անյետաձգելի գործերի պատճառով կարող չէ այդ օրը գալ, այլ անպատճառ կը գայ միւս օրը։ Բայց որովհետև փեսան Թեթեւամիտ մինըն է և նրա վրայ յոյսալ չէ լինել, ուստի ուսուցչուհին նրանից հանեց իւր վըհժը.—փեսան երրորդ օրը գալիս է պակուելու և մտնելով եկեղեցի, սկսում սպասել հարսի գալուն... բաւական երկար սպասելուց յետոյ, նա իւր հարսնացուից ստանում է մի հեռագիր, որով հարսը յայտնում էր, որ իւր ընկերուհիների հետ զբօսանքի գնացած լինելով, կարող չէ այդ օրը գալ։ Հեռագիրը վերջանում էր հետևեալ խօսքերով. «Այնպէս չէ, սիրելիս, մեր պակը կարելի է դեռ էլի երեք օր յետաձգել»։

***

ՓՈՐԱԳՐԻՒԼ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ.—Սրանից մի քանի ժամանակ առաջ, հնդկական բարձրագոյն ուսումնարանների վարչութիւնն իմանում է, որ քննութեան ենթարկուող աշակերտները կանխօրէն ծանօթ են լինում քննութեան մինչոցին առաջարկուելիք հարցերին, որովհետև այն տպարանատէրը, որի մօտ պատրաստելիս են եղել այդ հարցերը, ուսանողներին ծախել է դրանցից։ Պրօֆէսսորներից մինը կամենալով այդ չարիքի առաջն առնել, որոշում է քննութեան տոմսերը պատրաստել մի փորագրիչի, որի աշխատութեան ինքն անձամբ է հսկում. պրօֆէսսորը վերջնելով բոլոր տպագրուած համարները, գոցում է տպարանի դռները և բանալին վերցնում հետը։ Բայց օրքան է լինում ուսումնարանական վարչութեան զարմանքը, երբ հենց միւս օրը ուսանողների մօտից գըտնում են նոյն տոմսերից։ Բանից դուրս է գալիս, որ փորագրիչը կանխաւ իմանալով, Թէ ինչի համար է պրօֆէսսորը իւր մօտ կանչում իրեն, հաղնում է սպիտակ շոր և աշխատանքն ատարտելուց յետոյ, առանց պրօֆէսսորին իմացնելու, նստում է փորագրուած տոմսերի վրայ և բոլոր տոմսերը տպում են իւր շորի վրայ, որից ուսանողներն արտագրում են քննութեան տրուելիք հարցերը և կանխօրէն պատրաստւում են քննութեան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 21 դեկտեմբերի.—Վիկտորիա թագուհին Թէհրանի պարսկական դեսպան սեր Դրումմոնդ—Վօլֆին շնորհեց «Բանի»-ի Ա. աստիճան, Կարունի վրայ նաւագնացութիւն սկսուելու առթիւ։

Ֆրանսիական կառավարութիւնը Բուշիրում փոխ-հիւպատոս է նշանակել։

Շահը պատրաստւում է դէպի Եւրոպա մեկնելու համար։

ԲԵԼԳՐԱԴ, 22 դեկտեմբերի.—Մեծ Սկուպշտինան (սերբիական ազգային ժողով) 494 ձայների մեծամասնութեամբ 73 ձայնի դէմ քուէարկութեամբ ընդունեց նոր սահմանադրութիւնը։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ «ԹԻՖԼԻՍ» կայարանում
Գնում է
Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.
Գալիս է
Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ՁԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Պատրաստ է և ծախւում է Ձերամի սերմ, դեղին խոշոր-կան բուժուժից, որ երեք տարի է աջողութեամբ գնում է Կովկասում։

Յանկացողները թող վաղօրօք յայտնեն մեզ իրենց պահանջը։

Գինն է 80 կոպ. ամեն մի զօլտնիկին.

1/4 ֆունտից աւել առնողներին զիջումն կը լինի։

Հասցէն—Дербентъ. Константину Г. Мелик-Шахназаряцъ.

20—6

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Է

Մասւոր, բարոյական ախտի և անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. գօկտօր ՐՕԵՏԱՒԻ

Ուշադրէն հրապարակութիւնը երեք գծագիրներով է և գինն 1 րուբլի։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յուսահատ կորուստից։

1 ր. պոստալոն պէս գրէի հրապարակող Ր. Ֆ. Բիրեյի հրատարակչատան՝ ուղարկում է գիրքը։ (Հասցէն. R. F. Bierey's Verlags-Magasin in Leipzig).

(М) 50—50

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Հոգևոր իշխանութեան կարգադրութեան համաձայն, պէտք է կատարել Մոդնոյ ս. Գէորգ եկեղեցու նոր երէցփոխանի ընտրութիւնը։ Ուսաի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրւում են նոյն օրը մասնակցելու յիշեալ ընտրութեանը, որ տեղի կունենայ նոյն եկեղեցու ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցեաց Տփխիսեայ՝
Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց

1—1

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառւում են Խրիմեան Հայրիկի հետևեալ գրքերը.

1) Դրախտի ընտանիք, . . . գինը 1 ր. ֆ. ծախքը 25 կ.
2) Սիրաք և Սամուել, . . . — 1 ր. » » 25 »
3) Մարգարիտ արքայութեան, — 50 կ. » » 15 »
4) Յիսուսի վերջին շաբաթը, — 50 կ. » » 15 »

(ա.) 6—6

«ԱՐԱՔՍ» ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՈՒՄԱԾ Է։

Մինչև փետրուարի 15-ը «Արաքսի» երկու գրքերի գինն է 3 րուբլի, իսկ այնուհետև առորագրուողների համար՝ 5 րուբլի։

«Արաքսի« առաջին գիրքը կ'հրատարակուի փետրուարի վերջին. նրա մէջ կ'մտնեն ի մէջէ այլոց հռոմկլայական խնդիրներ, պեղումներ, մասնաւորապէս Կիլիկիոյ վրայ (Մարաշ, Զէյթուն, Հաջին Հանդերձ տեղական աւանդութիւններով)։ Մովսէսագրական, Նորավէպ Պօլսի կեանքից, Նորավէպ Տուրգենեվից, բանաստեղծութիւններ։ Կենսագրութիւններ Պօլսի ս. Պատրիարքի, Փրնուզի Նիկողոս եպիսկոպոսի (Զէյթունի հերոսի)։ Կարապետ Վարդապետ Շահնազարեանցի, Գերովբէ Պատկանեանցի, Գ. Սունդուկեանցի, վառօդապետ Տադեանի, Արդութեան-Երկայնաբազուկի։ Մովսէսեանական (ընդարձակ) գիրքներ. տաճկահայերի ընդհանուր գործերի տեսութիւնը, հասարակական և գրականական, և այլն։ Եւ որպէս հետ որուած չլինին գեղեցիկ պատկերներ և պետրանները։

Անցեալ տարուայ գրքերի գինն է այժմ 8 րուբլի։

Մեզ դիմելու են այսպէս. Петербургъ, Семеону Гуламирянцу.

Սիմէօն Գուլամիրեանց

2—1

GUARANA
De GRIMAULT et C-e
Pharmaciens à Paris
autorisé en Russie
ԳՈՒԱՐԱՆԱ
Պարկեշ Գլխոց և ընկ. Դեղավաճառների

Սոյն փոշու մի ծրարը բաւական է ամենաստիկ գլխացաւը, ամենաօգնեշ անգաւը (migraine-мигрень) բժշկելու։ Այս բուսական գեղն իւր բնական կազդուրիչ յատկութեամբը մեծապէս օգնում և բժշկում է փորացաւը։ Ընդունվում է փոքր ինչ շաքարաճառն ջրի մէջ ածելով։

Ամեն մի տուփ մէջ 12 ծրար կայ, որոնց վրայ գտնվում է Grimault et C-eի ստորագրութիւնը։ Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8, դեպօյում և գլխաւոր դեղավաճառների մօտ։ Т

(М.) д 27—14

SANTAL DE MIDY
Pharmacien de 1-re classe, à PARIS
permis en Russie
ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ
Պարիզի առաջնակարգ դեղագործ Պ. Միդիեի Ռուսաստանում ընդունուած.

Ծախւում է Պարէզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(М.) ե 30—16

„НОВОСТИ ДНЯ“

ЕЖЕДНЕВНАЯ ОБЩЕСТВЕННАЯ, ПОЛИТИЧЕСКАЯ и ЛИТЕРАТУРНАЯ ГАЗЕТА.

ИЗДАНІЯ ГОДЪ СЕДЬМОЙ.

1888 ВЪ ГОДУ

ИЗДАНІЯ ГОДЪ СЕДЬМОЙ.

Цѣль газеты „Новости Дня“—въ общедоступной формѣ служить для читателя живымъ и яркимъ отраженіемъ интересовъ текущей дѣйствительности. „Новости Дня“ удовлетворяютъ, какъ столичныхъ читателей, быстро схватывая на лету злобу столичнаго дня, такъ и провинціальныхъ, давая въ отдѣлѣ бѣллетристики легкое и занимательное чтеніе въ формѣ романовъ, повѣстей, очерковъ и разсказовъ, помѣщаемыхъ въ ежедневномъ фельетонѣ,

„НОВОСТИ ДНЯ“, какъ и въ прежніе годы, дадутъ своимъ читателямъ возможно ЯСНОЕ И ТОЧНОЕ ПРЕДСТАВЛЕНІЕ обо всѣхъ выдающихся явленіяхъ политической и общественной жизни.

МОСКОВСКІЯ НОВОСТИ—полный отчетъ о событіяхъ и происшествіяхъ прошедшаго дня; свѣдѣнія о предстоящемъ; отчеты и засѣданіяхъ сословныхъ, ученыхъ и благотворительныхъ учрежденій; распоряженія правительства и администраціи и т. д. МИМОХОДОМЪ—біографическія свѣдѣнія о знаменитыхъ ученыхъ, этнографическіе очерки, важнѣйшія открытія и изобрѣтенія, злобы иностранной жизни. СПОРТЪ—всевозможныя свѣдѣнія по всѣмъ отраслямъ спорта. ТЕАТРЪ и МУЗЫКА—рецензіи, краткія замѣтки, сообщенія и слухи изъ области театра и музыки. ПЕТЕРБУРГСКІЯ НОВОСТИ—постоянныя извѣстія изъ жизни приневской столицы. ПРОВИНЦІЯ—жизнь городовъ и деревень. ВЪ ЦАРСТВѢ ѲЕМИДЫ—судебная хроника: отчеты о выдающихся процессахъ въ общихъ судебныхъ мѣстахъ; отчеты о наиболѣе характерныхъ по бытовымъ подробностямъ процессахъ у мировыхъ судей, въ коммерческомъ судѣ и проч. РАЗНІЯ ИЗВѢСТІЯ—масса мелочей. СМѢХЪ и ГОРЕ—стихотворенія, анекдоты, эпиграммы, каламбуры, шутки, курьезы. СПРАВОЧНЫЙ ОТДѢЛЪ—биржевые бюллетени, судебный указатель, календарь, списокъ недоставленныхъ телеграммъ, зрѣлища и увеселенія и т. д.

Кромѣ всего этого въ „Новостяхъ Дня“ помѣщаются научно-популярные фельетоны, рефераты читанные въ засѣданіяхъ ученыхъ обществъ, въ популярномъ изложеніи,—и еженедѣльно: ВОСКРЕСНЫЕ НАБРОСКИ—фельетонъ московской жизни, ПЕТЕРБУРСКАЯ НЕДѢЛЯ—фельетонъ петербургской жизни, БЕСѢДЫ СТАРАГО ТЕАТРАЛА—театральный фельетонъ.

Годовымъ подписчикамъ будетъ высланъ отдѣльной книгой романъ: „Купленный мужъ“ — *В. Рибаля*

ПОДПИСНАЯ ЦѢНА НА 1889 Г.:

	На 12 м.	На 11 м.	На 10 м.	На 9 м.	На 8 м.	На 7 м.	На 6 м.	На 5 м.	На 4 м.	На 3 м.	На 2 м.	На 1 м.
Съ доставкою въ Москвѣ	8 —	7 50	7 —	6 50	6 —	5 50	5 —	4 50	3 70	2 90	1 90	1 —
Съ пересылкой въ города	9 —	8 50	8 —	7 —	6 50	6 —	5 50	5 —	4 —	3 —	2 —	1 —
Съ пересылкой за границу	13 —	12 90	12 —	10 90	9 70	8 80	7 90	6 70	5 60	4 70	3 —	1 60

Адресъ: Москва, контора газ. „НОВОСТИ ДНЯ“ *Ред.-изд* А. Липскеровъ.

3—3

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՅ
ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ
ՆՈՐ ԲԱՅ ԱՐԱՆՔ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մէրիմանեանի տունը, նահանգական դպրոցների դիմաց

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ստացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՒՍՅ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, Մերզլեանի տանը (նախկին Բելբի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԵԼՈՒ Ա.ՈՐԻՒ

Վերջնական ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ Է նշանակած

ՄԵԾ ԶԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

19—16

ԼՈՅՏ ՏԵՍԱՒ

„ԵՐԱԽԱՅՐԻՔ“

Հրատարակութեան վերջին՝ Չորրորդ Փետրը—Ծաղկը. գինն 50 կոպէկ է։ Վաճառւում է Թիֆլիսի «Կեդրոնական», «Կովկասեան» և միւս բոլոր գրավաճառանոցներում։ Յանկացողները նոյն տեղերում և հեղինակից կարող են ստանալ «ԵՐԱԽԱՅՐԻՔ» Ա-ոջին, Երկրորդ, Երրորդ (Գարուն, Ամառ, Աշուն) գրքերը, որոնց իւրաքանչիւրի գինը նոյնպէս 50 կոպէկ է։

Իմ հասցէն. Шулаверы (Черезъ Бѣлый Ключъ) *Аршаку Мелрабяну.*

(ա.) 5—1 Արշակ Մեհրաբեան

BATEAUX A VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆՈՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, յունվարի 5-ին, «ԱՆԱՏՕԼԻՈ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) գալու է Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103.

3—1

Дозволено цензурою. Тифлисъ, 22-го Декабря 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова